ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԸ

ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո Հարավային Կովկասը, Կասպից ծովի ավազանը եւ Կենտրոնական Ասիան հայտնվեցին Արեւմտյան տերությունների ուշադրության կենտրոնում: Վերջիններիս համար նշված տարածաշրջանները կարեւոր էին, ոչ միայն իրենց աշխարհագրական դիրքով, այլ նաեւ էներգետիկ պաշարների հարստությամբ: Վերահսկողությունը այդ պաշարների արդյունահանման եւ արտահանման նկատմամբ նշանակում է նաեւ վերահսկողություն ողջ տարածաշրջանի նկատմամբ: Եվ հասկանալի էր, որ ԽՍՀՄ-ից հետո մնացած միակ գերտերությունը չէր կարող իր ուշադրությունից դուրս թողնել այս տարածաշրջանը եւ հատկապես Կասպից ծովի ավազանը, որը նա համարում էր կարեւոր օղակ Հարավային Կովկաս-Կենտրոնական Ասիա իր համար ռազմավարական նշանակություն ստացող տարածաշրջանում: Ըստ ամերիկյան ստրատեգների, վերահսկողությունը Կասպից ծովի ավազանի նկատմամբ հնարավորություն կտա վերահսկողություն սահմանել նաեւ Կենտրոնական Ասիայի նկատմամբ, իսկ Հարավային Կովկասը այն միջանցքն է, որը կապում էր այս տարածաշրջանները Արեւմուտքին: Հասկանալի էր, որ Ռուսաստանը չէր պատրաստվում առանց ճակատամարտի զիջել իր դիրքերը եւ նրան հարկավոր էր մեկ անգամ եվս ապացուցել իր գերակայությունները այս տարածաշրջանների եւ հատկապես Կասպից ծովի ավազանի նկատմամբ, որտեղ եւ կենտրոնացած է տարածաշրջանի էներգետիկ պաշարների առյուծի բաժինը: Ստեղծված իրավիճակում «աշխարհ եկած» նորանկախ պետությունները շտապում էին շուտափույթ կերպով սկսել շահագործել Կասպիցի հարուստ ընդերքը, հարստացման եւ սեփական պետական մեքենայի պահպանման համար: Սակայն հիմնական խոչընդոտը, որը խանգարում էր այս գործընթացին, ծովի կարգավիճակի հարցն էր, որը թույլ չէր տալիս ակտիվ ներդրումներ կատարել եւ ներգրավել արեւմտյան ընկերություններին նավթի եւ գազի արտահանման գործընթացին մասնակցելու համար: Եվ հենց Կասպիցի կարգավիճակի հարցն էր, որն առաջնային դարձավ հինգ պետությունների՝ Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Իրանի եւ Ադրբեջանի համար:

1. Կասպից ծովի կարգավիճակը հետխորհրդային շրջանում

Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Կասպից ծովի ավազանում ի հայտ եկան նոր պետություններ, պարզ դարձավ, որ խորհրդահրանական նախկին պայմանագրերը այլեւս չեն բավարարում տարածաշրջանում ստեղծված նոր իրողություններին եւ հետեւաբար հարկավոր է նոր պայ-

մանագիր կնքել՝ որոշելու համար Կասպից ծովի միջազգային կարգավիճակը: Ավազանի երկրների միջև սկսվեցին բանակցությունների մի գործընթաց, որը տարբեր ընդհատումներով շարունակվում է մինչ օրս, բայց չնայած կատարված դիվանագիտական ողջ աշխատանքին, կողմերը այդպես էլ չեն կարողանում գալ ընդհանուր հայտարարի որոշելու համար ծովի կարգավիճակը: Այդ կարգավիճակի հարցը հատկապես հրատապ էր, քանի որ նորաստեղծ երկրներին առաջին հերթին հետաքրքրում էր Կասպից ծովի ածխաջրածնային պաշարները, իսկ գոյություն ունեցող խորհրդա-իրանական պայմանագրերը կարգավորում էին միայն ծովի ջրային հատվածի բաժանման եւ նավագնացության հարցերը: Նորանկախ պետությունները՝ Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը, իրենց բաժին էին պահանջում Կասպյան ավազանի ածխաջրածնի պաշարներից եւ հենց այս հարցն է, որ մինչեւ օրս հնարավորություն չի տալիս կողմերին գալու ընդհանուր հայտարարի: Օգտվելով ստեղծված այս իրավիճակից, տարբեր երկրներ սկսեցին ակտիվորեն ներգրավվել նորանկախ երեք պետությունների նավթային ծրագրերում, հասկանալի է, որ այս գործընթացում առաջնությունը պատկանում է ԱՄՆ-ին: Եվ, ըստ ռուս մասնագետների[1], այս ամենը տեղի է ունենում ի խաղտումն գործող իրանա-ռուսական պայմանագրերի, որը ինչպես նշեցինք արգելում է այլ երկրների մուտքը Կասպից ծով եւ այն համարում է փակ ջրային տարածք: ԽՍՀՄ-ի քայքայումից հետո, արդեն 1991թ.-ի դեկտեմբերին Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես եկավ առաջարկությամբ՝ Կասպից ծովը համարել փակ ջրային տարածք եւ հիմք ընդունել խորհրդա-իրանական գործող պայմանագրերը, ինչը նշանակում է, որ, առաջին՝ Ռուսաստանը, Ղազախստանը, Թուրքմենստանը, Իրանը եւ Ադրբեջանը սուվերեն իրավունք ունեն ծովի ափամերձ շրջանի 10 մղոնանոց հատվածի վրա, իսկ ծովի մնացած հատվածների վրա կողմերը ունեն հավասար իրավունքներ, երկրորդ Կասպից ծովը համարվում է փակ այն երկրների եւ նրանց ընկերությունների համար, որոնք բնական ելք չունեն դեպի ծով եւ չեն կարող օգտվել նրա բնական ռեսուրսներից:

Ռուսաստանի արտգործնախարարությունը նաեւ առաջարկ ուղարկեց մերձկասպյան երկրներին՝ ստեղծել կառավարման ընդհանուր մարմին, որը կկարգավորեր երկրների գործունեությունը 10 մղոնանոց տարածքից դուրս գտնվող հատվածում: Ըստ ռուսների, այս մարմինը պետք է մենաշնորհային իրավունք ունենար լիցենզիա տրամադրել այն ընկերություններին, որոնք կցանկանան զբաղվել ածխաջրածնի արդյունահանմամբ: Սակայն առաջինը այս առաջարկը մերժեց Բաքուն, ըստ որի իրանա-խորհրդային պայմանագիրը դադարել է գործել ԽՍՀՄ-ի փլուզման հետ միասին: Եվ արդեն Կասպից ծովի կարգավիճակի հարցի շուրջ Թեհրանյան առաջին հավաքին առաջարկեց ծովը

բաժանել ազգային սեկտորների մերձկասպյան երկրների միջեւ[2], փաստորեն մերժելով Ռուսաստանի առաջարկը: Ռուսական կողմը իր հերթին գտնում էր, որ հարցի նման ձեւակերպումը, այսինքն ծովի բաժանումը, հակասում է խորհրդա-իրանական պայմանագրերին: Ըստ ռուսների, ԽՍՀՄ-ի իրավահաջորդ հանդիսացող Ռուսաստանը եւ Իրանը ամբողջովին իրենց վրա են կրում Խորհրդային Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ նախկինում կնքված բոլոր պայմանագրերի պատասխանատվությունը: Եւ քանի դեռ դրանք չեղյալ չեն հայտարարվել պայմանագիրը ստորագրած երկրների՝ Ռուսաստանի Դաշնության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից, շարունակում են գործել, եւ նորանկախ պետությունները պարտավորեն հետեւել Կասպից ծովի կարգավիճակի շուրջ կնքված խորհրդա-իրանական բոլոր պայմանագրերի պահանջներին[3]: Ռուսական կողմը պնդում էր, որ, ըստ միջազգային օրենքների, մինչեւ ծովի կարգավիճակի մասին նոր պայմանագրի կնքնումը, սահմանամերձ բաժանումները հակասում են գործող պայմանագրերին[4]: Խոսելով Կասպից ծովի կարգավիճակի մասին, այնուամենայնիվ նկատենք, որ Խորհրդային Միության գոյության տարիներին, թեեւ ծովը համարվում էր դաշնային սեփականությունը, սակայն ԽՍՀՄ-ի նավթային արդյունաբերության նախարարությունը ծովը բաժանել էր ափամերձ շրջանի խորհրդային հանրապետությունների միջեւ, որպեսզի այդ հանրապետությունները ընդգծված տարածքներում կատարեն երկրաբանական հետազոտություններ: Եվ հենց այս քարտեզն է, որ նորանկախ պետությունները եւ հատկապես Ադրբեջանը օգտագործում են ապացուցելու համար իրենց իրավունքները ծովի այս կամ այն հատվածի նկատմամբ: Ըստ այդ քարտեզի, Ղազախստանը ստանում էր ափամերձ շրջանի մոտավորապես 30 տոկոսը, Ադրբեջանը՝ 19, Ռուսաստանը՝ 19, Թուրքմենստանը՝ 18, իսկ Իրանին էր տրամադրվում մոտ 14 տոկոսը, այսինքն մոտ 4 տոկոսով ավելին, քան նա կարող էր ունենալ ըստ Աստարա-Հասան-Կուլի սահմանագծի[5]: Հենց այս քարտեզի առկայությունն է, որ շատ դեպքերում վեճերի ու սուր հակասությունների պատճառ է դառնում տարածաշրջանի երկրների միջեւ, թույլ չտալով գալու ընդհանուր հայտարարի: Եվ թեեւ քարտեզը իր ձեւի մեջ ձեռք չեր տալիս Ադրբեջանին, սակայն վերջինս վկայակոչելով այն, փորձում էր ապացուցել, որ Կասպիցը միշտ էլ բաժանված է եղել ազգային սեկտորների եւ այժմ հարկավոր է այն հաստատել միջազգայնորեն լճի կարգավիճակի շուրջ կողմերի միջեւ կնքված նոր պայմանագրով, ինչը թույլ կտա ակտիվորեն սկսել նավթով հարուստ շրջանների շահագործումը եւ որ ամենկարեւորն է՝ այլ երկրների ներգրավումը այդ գործընթացում: Եվ տարածաշրջանի նորաստեղծ երկրները չսպասելով Կասպիցի կարգավիճակի հարցի շուրջ համընդհանուր պայմանգրի կնքմանը, շտապում էին պայ-

մանագրեր կնքել նավթային ընկերությունների հետ: Պաշտոնական Բաքուն արդեն 1994թ.-ի սեպտեմբերին հայտարարեց «դարի պայմանագրի» կնքման մասին[6]: Դրան հետևեց Ռուսաստանի արտգործնախարարության կոշտ հայտարարությունը, որտեղ մասնավորապես ասվում էր «...վերջին շրջանում Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը համառ ջանքեր են գործադրում պայմանագրեր կնքել արեւմտյան ընկերությունների հետ Կասպից ծովի ընդերքը շահագործելու համար: Բացի դրանից Ադրբեջանը եւ Թուրքմենստանը ընդունել են օրենսդրական ակտեր, փոփոխելով տիրանալ Կասպից ծովի մեծ տարածքներին: Նշված գործողությունները չեն համապատասխանում ծովի գործող իրավական կարգավիճակին եւ սպառնում են Ռուսաստանի իրավունքներին եւ շահերին»[7]: Եվ այսպես պարզ էր, որ նորանկախ պետությունները սկսում են ակտիվացնել իրենց գործողությունները ծովի ափամերձ շրջանում՝ առանց սպասելու, որ կողմերը համաձայնության կգան կարգավիճակի շուրջ[8]: Պարզ էր նաեւ, որ նման դիրքորոշումը կապված էր այն համոզման հետ, թե քաղաքական եւ տնտեսական շահերի սուր հակասությունների պայմաններում կողմերին դժվար թե հաջողվի շուտափույթ լուծել իրենց համար կենսական նշանակություն ունեցող կարեւորագույն հարցը՝ Կասպից ծովի կարգավիճակը: Հարաբերությունները կողմերի միջեւ սրվում էին եւ 1994թ.-ի հոկտեմբերի 6-ին Ռուսաստանը ՄԱԿ-ում տարածեց մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Ռուսաստանի դաշնության դիրքորոշումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին»[9]: Փաստաթղթում մասնավորապես հայտարարվում էր, որ նորաստեղծ պետությունները պարտավոր են կատարել ռուս-իրանական 1921 եւ 1940թթ.-ի պայմանագրերի պահանջները, եւ իրեն իրավունք էր վերապահում իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք անհանժեշտ կլինեն խաղտված իրավական կարգավիճակի վերականգնման համար: Նկատենք, որ 90-ական թվականների սկզբի ռուսական այս դիրքորոշմանը ամբողջությամբ աջակցում էր Իրանը եւ մասամբ Թուրքմենստանը: Այսինքն այդ շրջանում Ռուսաստանի դիրքորոշումը հանգում էր նրան, որ ծովի ափամերձ շրջանը 10-12 մղոն խորությամբ բաժանվում է կողմերի միջեւ, իսկ ծովի ընդերքի պաշարները հանդիսանում են ընդհանուր շահագործման օբյեկտ: Ըստ ռուս մասնագետների, մասնավորապես Ահմեդ Բուտաեւի, 1921 եւ 1940 թթ. պայմանագրով նորանկախ պետությունները կարող են հավակնել միայն ափամերձ շրջանի 10 մղոնանոց հատվածին եւ նրա ընդերքում գտնվող ածխաջրածնային պաշարներին, իսկ Կասպիցի կենտրոնական շրջանում գտնվող հանքային պաշարները ամբողջովին պատկանում են երկու պետության՝ Ռուսաստանի Դաշնությանը եւ Իրանի Իսլամական Հանրապետությանը[10]: Այսպիսով, պարզ էր, որ մի կողմից Ռուսաստանի, Իրանի եւ մյուս կողմից Ղազախստանի ու

Ադրբեջանի միջեւ կային լուրջ տարաձայնություններ Կասպիցի կարգավիճակի եւ նրա ընդերքում գտնվող ածխաջրածնի պաշարների շուրջ ընթացող պայքարում: Նկատենք, որ Թուրքմենստանը փորձում էր հնարավորինս չեզոք դիրքորոշում ունենալ, կարծես թե ավելի շատ հակված լինելով պաշտպանել ռուսիրանական կողմնորոշումը: Այդ շրջանում պաշտոնական Աստանան առաջարկեց ծովում հաստատել սահմանային գոտի 12 մղոնանոց հատվածով, իսկ ծովի մնացած մասը բաժանել, այսպես կոչված, տնտեսական գոտիների, որի շահագործման իրավունքը պետք է տրվի ափամերձ երկրներին: Ղազախական տարբերակի ընդունման դեպքում կասպյան երկրները եւ նրանք, ովքեր չունեն ելք դեպի Կասպից ծով, իրավունք են ստանում ազատ նավարկության, խողովակաշարերի անցկացման եւ երկրաբանական ու գիտահետազոտական աշխատանքների անցկացման համար[11]: Հասկանալի էր, որ այս տարբերակը չէր կարող արժանանալ Ռուսաստանի եւ Իրանի հավանությանը: Այսինքն պարզ էր, որ Կասպից ծովի կարգավիճակի հարցում մերձկասպյան երկրների մեջ հակասությունները ավելի շատ էին, քան ընդհանրությունները: Այսինքն ամեն ինչ գնում էր նրան, որ ավազանի երկրները պատրաստվում էին երկարատեւ բանակցային գործընթացի, որը, շարունակվում է մինչ օրս:

2. Կասպիցը ծով է թե լիճ (պայքար կարգավիճակի հարցի շուրջ)

ԽՍՀՄ-ի փլուզումը առաջ բերեց հին հարցը՝ Կասպիցը ծով է թե՞ լիճ: Խորհրդային Միության տարիներին հրատարակված պաշտոնական քարտեզներում եւ ատլասներում այն ներկայացվում էր որպես լիճ[12]: Միջազգային մի շարք այլ հանրագիտարաններում այն ներկայացվում է որպես «ծով-լիճ»: Նկատենք, որ ոչ էական թվացող այս հարցը լուրջ տարաձայնություններ առաջացրեց մերձկասպյան երկրների մոտ: Աշխարհագետները ծով են անվանում ջրային այն տարածքներին, որոնք բնական կապ ունեն համաշխարհային օվկիանոսի հետ: Այս տեսակետը հաստատում է նաեւ ՄԱԿ-ի Ծովային օրենսդրության մասին կոնվենցիան[13] (1982թ. դեկտեմբերի 10): Այսպիսով, կարող ենք ասել, որ ըստ ՄԱԿ-ի հռչակագրի՝ Կասպիցը ոչ թե ծով է այլ լիճ, քանի որ չունի բնական ելք դեպի օվկիանոս: Նկատենք, նաեւ, որ Կասպիցի մակերեսը մոտ 28 մետրով ավելի ցածր է քան օվկիանոսներինը եւ նրանց հետ բնական կապ ունեցող ծովերինը: Հետեւաբար, թե աշխարհագրական իր բնորոշմամբ եւ թե միջազգային օրենսդրությամբ՝ Կասպիցը իրականում լիճ է: Սակայն, ինչպես նշում է հայտնի ռուսաստանցի գիտնական Բուտաեւը, «եթե մերձկասպյան 5 երկրների նախագահները հավաքվեն եւ որոշեն, որ կասպիցը ծով է ապա այն կստանա ծովի կարգավիճակ եւ նրա վրա կտարածվի ՄԱԿ-ի 1958 եւ 1982թթ-ի ընդունված համապատասխան հռչակագրի կետերը»[14].

90-ական թվականների սկզբին Ղազախստանը կարծում էր, որ Կասպիցը չի կարող համարվել ոչ լիճ եւ ոչ էլ ծով: Ըստ Աստանայի, եթե Կասպիցը համարվի լիճ, ապա լուրջ խնդիրներ կառաջանան նավագնացության հետ կապված, իսկ եթե համարվի ծով, ապա, միջազգային օրենսդրությամբ ծովերին հատուկ ափամերձ 200 մղոնանոց հատվածները կհատեն միմյանց, ինչը լուրջ հակասությունների պատճառ կարող է դառնալ[16]: Ինչեւէ Կասպիցի հնարավոր ծովային կարգավիճակը ծեռնատու չէր նաեւ Ռուսաստանին, քանի որ այդ դեպքում միջազգային օրենսդրության համաձայն երրորդ երկրները կարող են Մոսկվայից պահանջել Վոլգա-դոնյան եւ Վոլգա-բալթյան ջրանցքները, որոնք Կասպիցը կապում են Սեւ եւ Բալթիկ ծովերի հետ՝ ապահովելով Կասպիցի ելքը դեպի օվկիանոս, ճանաչել որպես միջազգային ջրային ուղիներ, որոնք պետք է ազատ լինեն երրորդ երկրների նավերի նավարկության համար: Այսինքն այս դեպքում Ռուսաստանը ստիպված կլինի այս ջրանցքներով թույլ տալ, ոչ միայն այլ երկրների առեւտրային, այլ նաեւ ռազմական նավերի ազատ նավարկությունը[16]: Հասկանալի է, որ Ռուսաստանը, որը միշտ էլ դեմ է եղել Կասպից ծովի միջազգային կարգավիճակին, այն ճանաչելով միայն որպես ներքին ջրային տարածք, չի համաձայնի, որ Կասպիցը պաշտոնապես ստանա ծովի կարգավիճակ, այստեղից բխող հետեւանքներով: Այսպիսով պարզ է, որ Կասպիցի շուրջ ստեղծվել է քաղաքական մի իրավիճակ, երբ վերջինիս կարգավիճակի հարցը որոշելիս նախ եւ առաջ բախվում են այն հարցին թե ինչ ջրային տարածքով են այդ երկրները իրարից բաժանվում՝ ծովով թե լճով: Մինչեւ այս կարգավիճակը չհստակեցվի եւ այս հարցի պատասխանը չգտնվի, դժվար կլինի խոսել արդեն 16 տարի ձգձգվող բանակցային գործընթացում հնարավոր հաջողության մասին: Ինչ վերաբերում է Կասպիցի «լճային» կարգավիճակի հարցին, ապա նկատենք, որ լճերը համարվում են, այսպես կոչված, ջրային ներքին տարածքներ եւ նրանց վրա չի տարածվում է ՄԱԿ-ի՝ ծովերի մասին բանաձեւը: Ինչ վերաբերվում է սահմանամերձ լճերին, ապա նրանց իրավական կարգավիճակի շուրջ համաձայնությունները ծեռք են բերվում միմիայն վերջինիս հարող երկրների կողմից[17]:

Միայն նրանք կարող են որոշել, թե ինչ կարգավիճակ է շնորհվելու ջրային այդ տարածքին եւ արդյոք նրա վրա տարածվելու է ծովերի մասին միջազգային օրենքի դրույթները, թե ոչ: Այսպես, ըստ ծովային իրավունքի միջազգային մասնագետների(օր. Անատոլի Կալոդկինի[18]) «... միջազգային ջրերի եւ լճերի մեծ մասը շահագործվում է համատեղ եւ բաժանված չեն սահմանային գծերով»: Օրինակ Տիտիկավա լիճը միասնաբար են շահագործում Պերուն եւ Բոլիվիան, իսկ Չադ լիճը համարվում է Կամերունի, Նիգերիայի, Նիգերի եւ Չադի համատեղ սեփականությունը եւ այլն: Այսինքն,

նշում են մասնագետները, ցանկացած սահմանամերձ ջրային տարածքի կարգավիճակը որոշվում է առանձնահատուկ կարգով եւ այն, իր ծեւի մեջ, կարող է լինել միակը եւ անկրկնելին աշխարհում[19]:

Եվ այսպես, կարող ենք ասել, որ Կասպից ծովի կարգավիճակի եւ նրա ջրային տարածքների եւ ընդդերքի շահագործման հարցերը կարող են որոշվել միմիայն Կասպիցին սահմանամերձ երկրների կողմից: Մի իրավիճակ, որը սակայն մինչ օրս էական արդյունք չի տվել եւ չնայած արդեն 16 տարի ձգձգվող բանակցային գործընթացների եւ 20-ից ավելի հանդիպումների, որոնք անցկացրել են մերձկասպյան 5 երկրների ղեկավարները, մի ընդհանուր փաստաթուղթ այդ լիճ-ծովի միջազգային կարգավիճակի եւ նրա հարստության շահագործման մասին չկա:

---

[1] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[2] Troubled waters.The Geopolitics of The Caspian region. R.Hrair Dokmejian and Hovann H. Simonian. London. New York. 2001 page 19-24
[3] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[4] Jamestown Foundetion Monitor.December 6, 1995. http://www.jamestown.org/cgi-bin/htsearch MOSCOW MINISTRY PURSUING PREEMPTIVE MINERAL RIGHTS IN CASPIAN SEA
[5] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[6] Troubled waters.The Geopolitics of The Caspian region. R.Hrair Dokmejian and Hovann H. Simonian. London. New York. 2001 page 19-24
[7] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[8] Jamestown Foundetion Monitor. September 23, 1999 http://www.jamestown.org/cgi-bin/htsearch CASPIAN SEA STATUS: MOSCOW REACHES BACK TO SOVIET TREATIES.
[9] Jamestown Foundetion Monitor. September 23, 1999 http://www.jamestown.org/cgi-bin/htsearch CASPIAN SEA STATUS: MOSCOW REACHES BACK TO SOVIET TREATIES.
[10] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[11] Troubled waters.The Geopolitics of The Caspian region. R.Hrair Dokmejian and Hovann H. Simonian. London. New York. 2001 page 21
[12] Малый атлас СССР, 1978 г.; Малый атлас Мира, 1981 г.; Географический атлас, 1980 г.
[13] Convention on the Low of the Sea (UNCLOS) http://www.un.org/russian/law/seabed/
[14] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[15] Convention on the Low of the Sea (UNCLOS) http://www.un.org/russian/law/seabed/
[16] Troubled waters. The Geopolitics of The Caspian region. R.Hrair Dokmejian and Hovann H. Simonian. London. New York. 2001 page -21
[17] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/
[18] ***Observer http://www.nasledie.ru/oboz/N06_98/6ST_10.HTM*** А.КОЛОДКИН, судья Международного Трибунала ООН по морскому праву.
[19] КАСПИЙ: ЗАЧЕМ ОН ЗАПАДУ? Бутаев Ахмед Магомедович http://www.caspiy.net/